

ԲԱՌԱՊԱՏՃԵՆՈՒՄ և ԲԱՌԱՊԱՏՃԵՆՄԱՆ
ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ

Աշխարհի բոլոր լեզուները սերտորեն համագործակցում են միմյանց հետ և հաճախ փոխառում կամ պատճենում են հասարակական կյանքի տարբեր ոլորտների և բնագավառների տարբեր հասկացություններ՝ դրանով իսկ հարստացնելով սեփական բառապաշարը:

Պատճենումը փոխառության եղանակ է, որը բնորոշ է եղել հայոց լեզվին դեռևս գրաբարից: Մ. Աբեղյանը առաջադիրներով բաղադրությունների առնչությամբ անդրադարձել է օտարաբան կազմություններին՝ քննելով դրանց օրինակները, որոնք կազմվել են հունարենի, լատիներենի, ռուսերենի, գերմաներենի հետևողությամբ: Պատճենումը հայոց լեզվի բառապաշարի հարստացման միջոցներից է (պատճենում՝ ռուս. калька < ֆր. calque): Պատճենումները հայերեն այն բառերն են, որ կազմվում են օտարազգի բառերի իմաստների թարգմանությամբ կամ նրանց կառուցվածքի նմանողությամբ:¹ Տարբերվում են բառապատճենումների հետևյալ տեսակները. 1) բառակազմական (բառապատճենումներ), երբ կատարվում է օտար բառի բաղադրիչների թարգմանություն (հայ. գերմարդ, անգլ. superman), 2) իմաստային, երբ փոխառվում է միայն օտար բառի իմաստը (հայ. գերատեսչություն, ռուս. структура), 3) կիսապատճենումներ, երբ թարգմանվում է բառի միայն մի մասը (հայ. կինոմշակույթ, ռուս. кинокультура):

Որպես պատճենման օբյեկտ կարող են հանդես գալ միայն բաղադրյալ կազմությունները: Ժամանակակից հայերենում հատկապես տարածված են ռուսերենից, անգլերենից, ֆրանսերենից կատարված բառային պատճենումները: Կարևոր է, որ պատճենված բառը ճշգրիտ արտահայտի պատճենվող միավորի իմաստը և կառուցվի մայրենի լեզվի օրինաչափություններով: Պատճենումը պետք է քննել լայն իմաստով՝ ելնելով ոչ միայն ձևային, այլև բառերի և իմաստների կայուն կապը ներկայացնող կառուցվածքի վերաբաղումից:

Հայտնի է, որ հայերենում վերջածանցավոր կազմություններն զերգանցում են նախածանցավորներին, և դա պայմանավորված է նրանով, որ հայերենի նախածանցները թե՛ քանակապես, թե՛ իրենց

¹ Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1999:

կենսունակությամբ զիջում են վերջածանցներին, մինչդեռ ածանցավոր պատճենյալ կադապարներում գերակշռում են նախածանցավոր կազմությունները: Նախածանցավոր բառակազմական կադապարներում ակտիվություն են դրսևորում գեր- — сверх-, super-, ներ- — внутри-, в-, — փոխ- вице-, под-, հետ- — после-, пост-, ապ(ա) - — де- նախածանցները, որոնք բաղադրվում են ինչպես պարզ, այնպես էլ բաղադրյալ հիմքերի հետ: Պարզ հիմքով նախածանցավոր պատճենյալ կազմությունները քանակապես զիջում են բաղադրյալ հիմքով նախածանցավոր պատճենյալ կադապարներին:

1) Նախածանց + պարզ բառ կադապարով բառապատճենումներ՝ գեր- — գերմարդ (ռուս. сверхчеловек, անգլ. superman), գերհզոր (ռուս. сверхмощный), գերծանր (ռուս. сверхтяжелый), գերաստղ (անգլ. superstar) և այլն, որոնք հիմնականում նորաբանություններ են:

Փոխ- — փոխնախագահ (ռուս. вице-президент):

Հակա- — հակազորի (ռուս. контратака), հակակշիռ (ռուս. противовес) և այլն:

Ենթա- — ենթակետ (ռուս. подпункт), ենթաշերտ (ռուս. подслой) և այլն:

2) Նախածանց + անորոշ դերբայ կադապարով կազմություններ՝ գեր- — գերբեռնվել (ռուս. перегрузиться), գերածել (ռուս. перерастать), գերիշխել և այլն:

Ներ- — ներառել (ռուս. включать), ներդրել (вставлять), ներգրավել (привлечь), ներմուծել, ներթափանցել և այլն:

Հակ(ա)- — հակասել (противоречить), հակազդել (противодействовать), հակադրել, հակամարտել և այլն:

Վեր(ա)- — վերականգնել (восстанавливать), վերականգնել (перестраивать), վերահսկել, վերանորոգել և այլն:

3) Նախածանց + բայանուն կառուցվածքով պատճենումներ՝ գեր- — գերճնշում (сверхдавление), գերհագեցում (перенасыщение), գերզարգացում (сверхразвитие), գերլարում և այլն:

Փոխ- — փոխհաստուցում (возмещение), փոխըմբռնում (взаимопонимание), փոխզիջում, փոխշփում և այլն:

4) Նախածանց + վերջածանցավոր բառ կադապարով կազմություններ՝ գեր + վերջածանցավոր բառ՝ գերշահույթ (сверхприбыль), գերկառույց, գերտերություն, գերազատական:

Փոխ- — փոխխոսակ, փոխառնչություն, փոխազդեցություն (взаимодействие):

Հակա- — հակադրույթ (антитезис), հակահրդեհային (противопожарный), հակահրթիռային (противоракетный), հակամարտություն, հականախագահական, հակաքարոզչություն, հակաիրաքյան և այլն:

Համա- — համաքաղաքական (общеполитический), համանախագահություն, համապետական, համահասարակական և այլն:

Նախ(ա)- — նախընտրական (предвыборный), նախադպրոցական (дошкольный) և այլն:

Ներ- — ներքաղաքական (внутриполитический), ներուժային և այլն:

Ապա- — ապաքաղաքական (аполитичный), ապակենտրոնացնել (децент-рализовать), ապակառուցողական:

5) Նախածանց + բարդ ածանցավոր բառ կաղապարով բառապատճենումներ, որոնք քանակապես զիջում են նախորդ կաղապարով կազմություններին՝ հակասահմանադրական (антиконституционный), հակաահաբեկչական (антитеррористический), հակաժողովրդավարություն, ներկուսակցական, վերկուսակցական, փոխգործակցություն, գերծանրքաշային, ապատեղեկատվություն, փոխհրաձգություն և այլն:

6) Սակավադեպ են նախածանց + բարդ բառ կաղապարով կազմությունները՝ փոխգնդապետ (подполковник), փոխքաղաքապետ, գերիրապաշտ, համասեփականատեր և այլն:

Պատճենյալ վերջածանցավոր կաղապարները քիչ գործածական են: Այս կազմություններում բառակազմական ակտիվություն է դրսևորում - (ա)մետ վերջածանցը, որով ածանցված բառերը նորակազմություններ են և պատկանում են գերազանցապես քաղաքական տերմինաշերտին, ինչպես՝ իշխանամետ, իսլամամետ, ռուսամետ, նախագահամետ, կենտրոնամետ և այլն:

Հայերենը վաղուց իր բառապաշարում ունի ունակ ածականը և ունակություն գոյականը, որոնք համարժեք են ռուսերենի способный, способность բառերին: Այժմ դրանք որոշ կազմություններում դարձել են ածանցական միավորներ և ռուսերենից պատճենումներում համապատասխանեցվել են վերը նշված միավորներին: Այսօր մենք ունենք բայ + ունակ կաղապարով պատճենումներ՝ վճարունակ (платежеспособный), աշխատունակ (работоспособный), մրցունակ (конкурентоспособный), մարտունակ: Հայերեն -ային վերջածանցը գործածվում է -ник -ով ռուսերեն բառերի պատճենման համար, այսպես՝ ճանապարհային - дорожник, երկաթուղային - железно-дорожник:

Անգլերեն speaker բառի փոխարեն այժմ հայերենում լայն գործածություն է ստացել պատճենյալ խոսնակ բառը:

Ռուսերենում բարդ բառերի՝ ստորադասական հարաբերությամբ կապված բաղադրիչներն ունեն նույն շարադասությունը որպիսիք ունեն հայերենի կազմությունները, ուստի հայերենում պատճենումով ստեղծված բարդությունների և պատճենվող միավորների կառուցվածքներում տարբերություններ գրեթե չեն նկատվում:

Պատճենյալ բարդ կազմություններում բառակազմական ակտիվ գործառույթ են դրսևորում եթեր- > эфир-, տեսա- > видео-, լուսա- > фото-, հեռուստ(ա)- > теле-, կենսա- > био- ձևայքները, որոնք հանդես են գալիս որպես առաջին բաղադրիչ: Դրանք սովորաբար երկբաղադրիչ իսկական բարդություններ են, որոնք հանդես են գալիս բայարմատ + գոյական կաղապարով, ինչպես՝ տեսասկավառակ - видеодиск, տեսահամալիր - видеоконплекс, տեսահամակարգ - видеосистема, տեսաժապավեն - видеопленка և այլն:

Գոյական + գոյական կաղապարով պատճենումներ՝ եթերաժամ, լուսապատ-ճեն, լուսանկար, կենսադաշտ (биополе) և այլն:

Դերանուն + գոյական կաղապարով պատճենյալ կազմություններ՝ ինքնանը-պատակ - самоцель, ինքնարժեք - себестоимость, ինքնական - своевольно:

Դերանուն + բայանուն կաղապարով բաղադրություններ՝ ինքնահրկիզում - самосожжение, ինքնակործանում - саморазрушение, ինքնապահպանում, ինք-նահաստատում և այլն:

Ռուսերեն ածանցավոր բաղադրիչներով բարդությունները կարող են պատճեն-վել իբրև ածանցագուրկ բարդություններ հետևյալ կաղապարներով՝ ա) գոյական + բայարմատ՝ գովազդատու - рекламaдaтeль, գործատու - работaдaтeль և այլն:

բ) Գոյական + գոյական՝ սկավառակաձև - дискоoбpaзный, լուսնաձև - лyнoоб-paзный:

գ) Ածական + բայարմատ՝ դյուրահալ - тyгoплaзкий, պայծառատես - яcнoвидящий:

Հայերենը լայն հնարավորություններ ունի միմյանց հետ կապված մեկից ավելի բառերը միավորելու մեկ ամբողջի մեջ: Հայերենի բառաբարդման տեխնիկայի արդյունավետության շնորհիվ է, որ օտար բազմաթիվ բառկապակցություններ հայերենում պատճենվում են որպես բարդ բառեր, ինչպես՝ железная дорога (ռուս.) - երկաթուղի

номер телефона (ռու.) – հեռախոսահամար
игровая площадка (ռու.) – խաղահրապարակ
порядок дня (ռու.) – օրակարգ
точка зрения (ռու.) – տեսակետ
постановка вопроса (ռու.) – հարցադրում
птичий грипп (ռու.) – թռչնագրիպ
water land (անգլ.) – ջրաշխարհ
water ball (անգլ.) – ջրագնդակ և այլն:

Օտար բարդ բառի դիմաց համապատասխան հայերեն բարդ բառ կաղապարով կազմությունները մեծ մասամբ ճշգրիտ վերարտադրում են պատճենվող միավորի կառուցվածքը: Դա, սակայն, ոչ թե տվյալ միավորի կառուցվածքի մեխանիկական վերարտադրումն է, այլ պատճենվող լեզվի՝ հայերենի բառակազմական օրինաչափություններով կազմված, որոնք տվյալ դեպքում համընկնում են օտար լեզվի օրինաչափություններին, ինչպես՝ stereotype (անգլ.) – կարծրատիպ օրիենտալիստ (ֆր. orient – արևելք) – արևելագետ
двоеборье (ռու.) – երկամարտ
медсестра (ռու.) – բուժքույր
екундомер (ռու.) – վայրկյանաչափ
тележурналист (ռու.) – հեռուստալրագրող և այլն:

Պատճենման արդյունք են նաև հայոց լեզվում աշխուժացած հարաբերական ածական + հարաբերական ածական կաղապարով համադրական բարդությունները, ինչպես՝ քաղաքաիրավական – политикоправовой, պետաիրավական – государственноправовой, ռազմաօդային – военно-воздушный, զաղափարաբարոյական, կրոնաքաղաքական և այլն: Այս կաղապարով բարդությունների բաղադրիչները կապված են համադասական հարաբերությամբ:

Օտար բառերի հիման վրա կազմված համագործնական հասկացությունը, առարկան, երևույթը առավել պատկերավոր ներկայացնելու համար հայերենը երբեմն շեղվում է բնագրից, այսպես՝ համազգեստ – ֆր. uniform (բառացի՝ միաձև, միատեսակ), ամսագիր – ֆր. journal (օրական, լրագիր), անգլ. journal (շաբաթաթերթ), կողմնորոշում – ֆր. orientation (արևելում), մրցարշավ – անգլ. carting (սայլ և բայակերտ ածանց), լրագիր – անգլ. newspaper (լուրերի թուղթ), լրատվամիջոց – անգլ. medium (միջոց) և այլն:

Հայերենի բառակազմության օրինաչափություններին համապատասխան բարդ բառերի բաղադրիչները միմյանց հետ սովորաբար կապվում են ստորադասական հարաբերությամբ, բառի հիմնական հմաստն արտահայտում է վերջին բաղադրիչը, իսկ առաջինը լրացնում է վերջինիս: Մ. Աբեղյանը բերում է մի շարք օրինակներ, որոնք կազմվել են հունարենի հետևողությամբ և օտարաբան կառույցներ են (արժանապատիվ, մայրաքաղաք), քանի որ հակառակ սկզբունքով են կազմված: Հայերենում գործածական են մեխանիկորեն պատճենված ածանցավոր կազմություններ նա, ինչպես՝ մոսկովյան - московский, միջազգային, ստորգետնյա, անդրկասպյան, համազգային և այլն:

Կիսապատճենումը օտար բառի կառուցվածքի վերարտադրումն է մասամբ մայրենի, մասամբ օտար լեզվանյութով:

Բառ - կիսապատճենումներն իրենց բառակազմական արժեքով ոչ միայն բարդություններ են, այլև ածանցավոր կազմություններ:

Արդի հայերենում գործուն է հայերեն նախածանց + օտար բաղադրիչ կաղապարը՝ անլեզալ, հակակրիմինալ, ենթատեքստ, գերադրելմ:

Առավել հաճախված են հայերեն նախածանց + օտար բաղադրիչ + հայերեն վերջածանց կաղապարով կազմությունները՝ միջկլանային, ներկլանային, անևորմա-լություն, հակադուպլինգային և այլն:

Օտար բաղադրիչ + հայերեն վերջածանց կաղապարով կազմությունները հաճախադեպ են, դրանք հիմնականում նորակազմություններ են՝ կլանային, կրեդիտային, լեզվափոխություն, կոնգրեսական, ինտերնետային, լեքոնիի, մաքսային, սկանդալային և այլն:

Օտար բաղադրիչ + մայրենի բայակերտ ածանց կաղապարով կազմությունները նա ակտիվություն են դրսևորում՝ ֆինանսավորել, օլիգարխացնել, ֆիլտրացնել, լիցենզավորել, մոբիլիզացնել և այլն:

Շամանակակից հայերենում առավել կենսունակ են դարձել Եվրա (եվրոպական) հատված հիմքով կազմությունները, որոնք գերազանցապես նորաբանություններ են՝ Եվրատեսիլ- անգլ. Eurovision, ռուս. Евровидение, Եվրախորհուրդ - ռուս. Евросовет, Եվրամիություն, Եվրաֆանձնաժողով, Եվրաարշավ, Եվրամրցաշրջան և այլն:

Կիսապատճենյալ կաղապարներում գործուն են կիևո-, ավտո- ձևույթները, որոնք հանդես են գալիս որպես առաջին բաղադրիչ՝ կիևոփառատոն, կիևոնկար, կիևոկենտրոն, կիևոմշակույթ, կիևոաշխարհ, կիևոտեսակ, ավտոմրցարշավորդ, ավտոտնակ և այլն:

Բառակազմական ակտիվություն են դրսևորում գազ և նավթ փոխառյալ բառերը, որոնցով բաղադրված կազմությունները արդյունաբերության ոլորտին պատկանող բառեր են՝ գազամատակարարում, գազապահեստարան, գազալցակայան, գազաբաշխում, գազախողովակ, գազատար, նավթամուղ, նավթահանք և այլն:

Օտար բաղադրիչ + մայրենի բաղադրիչ կադապարով բաղադրություններ՝ ֆորպոստատեր, լոջայաձև, բենզակայան, ռեկորդակիր, ֆոնդապահ և այլն: Կիսապատճենյալ բարդություններում հաճախադեպ են ածական + ածական (հարաբերական) կադապարով բաղադրիչների համադասական հարաբերությամբ՝ Կապված կազմությունները՝ ֆինանսավարկային, ֆինանսատնտեսական և այլն:

Կիսապատճենումներում ակտիվորեն գործառվում են բաղադրիչների համադասական հարաբերությամբ կապված վերլուծական բարդությունները, որոնք ստեղծվում են գոյական + գոյական կադապարով (օտար բաղադրիչ + մայրենի բաղադրիչ)՝ ինտերնետ-սրճարան, բիզնես-համաժողով, բար-սրճարան և այլն:

Այսպիսով, հայերենում ակտիվորեն գործում է բառապատճենման եղանակը, և մեր լեզվի բառապաշարը հարստանում է պատճենյալ կազմություններով, որոնք բառակազմությամբ թեև հենվում են օտար միավորի կառուցվածքի վրա, սակայն մեխանիկորեն չեն վերարտադրում միավորի բաղադրիչների արտահայտած իմաստը, այլ գործում են հայոց լեզվին հատուկ բառակազմության օրինաչափությունները: Քննությունը ցույց տվեց, որ պատճենումով ստեղծված կազմությունները մեծ մասամբ նորաբանություններ են:

Հայտնի է, որ հայերենում վերջածանցումն ավելի կենսունակ է, մինչդեռ ածանցավոր բառերի պատճենման հետևանքով հայերենի բառակազմության մեջ առկա են հետևյալ միտումները՝ ա) նախածանցների ակտիվացում, բ) նախածանցավերջածանցավոր կազմությունների ակտիվացում: Որոշ նախածանցների բառակազմական ակտիվությանը նպաստում է այն, որ ռուսերենի տարբեր նախածանցավոր բառերի իմաստները հայերենում հաճախ ձևավորվում են մեկ ածանցով (փոխ- — взаимо-, контр-, под-, вице-, пере-):

Հավելենք, որ ուսումնասիրության փաստական նյութը քաղել ենք տարբեր ուղ-ղության և բնույթի թերթերի՝ «Ազգ», «Գրական թերթ», «Իրավունք», «Հայկական ժամանակ», «Հայոց աշխարհ», «Ֆուտբոլ Plus», տարբեր համարներից: